ՀՀ ԱԳՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2024թ.

ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների՝

2024 թվականին ԱԳՆ մասով կատարված աշխատանքների վերաբերյալ

2024թ. Հայաստանի Հանրապետությունը շարունակել է աշխատանքները ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագրով նախանշված առաջնայնությունների իրականացման ուղղությամբ: Այս համատեքստում տարածաշրջանում խաղաղության հաստատման և հարևանների՝ մասնավորապես Ադրբեջանի և Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման հարցերը, ավանդական գործընկերների հետ հարաբերությունների ամրապնդումն ու խորացումը եղել են ՀՀ կառավարության արտաքին քաղաքականության առանցքային ուղղությունները:

Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորում

Խաղաղության և միջպետական հարաբերությունների հաստատման վերաբերյալ համաձայնագիր

2024 թվականի փետրվարի 28-ին Բեռլինում տեղի է ունեցել Հայաստանի ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի, Ադրբեջանի ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովի և Գերմանիայի ԱԳ նախարար Անալենա Բերբոքի եռակողմ հանդիպումը, որին հաջորդել է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության ԱԳ նախարարների երկկողմ հանդիպումը:

2024 թվականի մայիսի 10-ից 11-ը Ալմաթիում տեղի են ունեցել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և ԱՀ ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովի բանակցությունները: Նախարարները և նրանց պատվիրակությունները շարունակել են «Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության և միջպետական հարաբերությունների հաստատման վերաբերյալ» երկկողմ համաձայնագրի նախագծի շուրջ քննարկումները:

2024 թվականի սեպտեմբերի 26-ին Նյու Յորքում ՄԱԿ գլխավոր ասամբլեայի 79-րդ նստաշրջանի ընթացքում ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի նախաձեռնությամբ և մասնակցությամբ տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և ԱՀ ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովի հանդիպումը:

2024 թվականի հոկտեմբերի 18-ին Ստամբուլում անցկացվող «3+3» խորհրդակցական հարթակի շրջանակում տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և ԱՀ ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովի հանդիպումը:

2024 թվականի հոկտեմբերի 24-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և ԱՀ նախագահ Իլհամ Ալիևը հանդիպել են ՌԴ Կազան քաղաքում՝ BRICS-ի 16-րդ գագաթնաժողովի շրջանակներում:

Նշված հանդիպումների, ինչպես նաև դիվանագիտական խողովակներով մտքերի փոխանակության արդյունքում 2024թ. ավարտի դրությամբ համաձայնեցված են եղել «Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության և միջպետական հարաբերությունների հաստատման վերաբերյալ» երկկողմ համաձայնագրի նախագծի նախաբանը և 15 հոդված, ինչպես նաև ևս 2 հոդվածի առանձին դրույթներ:

Սահմանազատում

2024 թվականի հունվարի 31-ին Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության սահմանին տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման ու սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի և Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի վեցերորդ, մարտի 7-ին՝ յոթերորդ, իսկ ապրիլի 19-ին՝ ութերորդ հանդիպումը: Վերջին հանդիպման արդյունքում ստորագրվել է արձանագրություն:

2024 թվականի մայիսի 15-ին Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության սահմանին տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի և Ադրբեջանի Հանրապետության ու Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի իններորդ հանդիպումը: Հանդիպման ընթացքում հանձնաժողովները, 2024թ. ապրիլի 19-ի 8-րդ հանդիպման արձանագրության համաձայն, քննարկել են կատարված աշխատանքները և, հաշվի առնելով տեղանքում գեոդեզիական չափումների արդյունքում հստակեցված կոորդինատները, ԽՍՀՄ զինված ուժերի գլխավոր շտաբի 1976թ. տեղագրական քարտեզի համաձայն, որը հերթապահության ընթացակարգ է անցել 1979թ., համաձայնեցրել են անմիջականորեն Բաղանիս (ՀՀ)-Բաղանիս Այրում (ԱՀ), Ոսկեպար (ՀՀ)-Աշաղը Ասկիպարա (ԱՀ), Կիրանց

(ՀՀ)-Խեյրումլի (ԱՀ) և Բերքաբեր (ՀՀ)-Կըզըլ Հաջիլի (ԱՀ) բնակավայրերի միջև սահմանագծի հատվածների համատեղ կազմված Արձանագրություն-նկարագրությունը՝ Խորհրդային Միության փլուզման պահի դրությամբ գոյություն ունեցող իրավաբանորեն հիմնավորված միջհանրապետական սահմանին համապատասխանեցնելու նպատակով: Հանդիպման արդյունքում ստորագրվել է Արձանագրություն:

2024 թվականի օգոստոսի 30-ին ստորագրվել է Հանձնաժողովների համատեղ գործունեության մասին կանոնակարգը: ՀՀ Սահմանադրական դատարանը 2024թ. սեպտեմբերի 26-ին կայացրել է որոշում այն մասին, որ Կանոնակարգում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը: ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ սահմանազատման գործընթացում Ալմա Աթայի հռչակագրով առաջնորդվելու հիմնարար սկզբունքը կանխորոշում է, որ սահմանազատման հիմքում պետք է ընկնեն այն փաստաթղթերը և քարտեզները, որոնք արտահայտել են Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի միջև Խորհրդային Միության փլուզման պահի դրությամբ գոյություն ունեցող վարչական սահմանը: Հոկտեմբերի 23-ին ՀՀ Ազգային ժողովը վավերացրել է Կանոնակարգը, իսկ հոկտեմբերի 24-ին Հանրապետության նախագահը ստորագրել է Կանոնակարգը վավերացնելու մասին օրենքը: Ադրբեջանի Հանրապետությունում Կանոնակարգը հաստատվել է ԱՀ նախագահի 25.10.2024թ. թիվ 218 հրամանագրով: Հայաստանի Հանրապետությունը և Ադրբեջանի Հանրապետությունն ավարտել են Կանոնակարգի՝ ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներպետական ընթացակարգերը և 2024թ. նոյեմբերի 1-ին փոխանակել են համապատասխան ծանուցումներ: Կանոնակարգն ուժի մեջ է մտել 2024թ. նոյեմբերի 1-ին:

2024 թվականի նոյեմբերի 1-ին Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության սահմանին տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի և Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի տասներորդ հանդիպումը: Հանդիպման ընթացքում, վերոնշյալ Հանձնաժողովների համատեղ գործունեության մասին 2024 թվականի օգոստոսի 30-ին ստորագրված Կանոնակարգի 7-րդ հոդվածի համաձայն, Կողմերը փոխանակվել են իրենց պետությունների կողմից՝ Կանոնակարգի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի իրականացման մասին ծանուցումներով:

Այլ

2024 թվականի ընթացքում ՀՀ-Ադրբեջան բանակցություններում տեղի է ունեցել մտքերի փոխանակություն նաև տարածաշրջանային տրանսպորտային ենթակառուցվածքների ապաշրջափակման և այլ թեմաներով:

Կայացել են նաև միջխորհրդարանական շփումներ: Այսպես, 2024 թվականի մարտի 22-ին Ժնևում ընթացող Միջխորհրդարանական միության 148-րդ վեհաժողովի շրջանակում տեղի է ունեցել Ադրբեջանի և Հայաստանի խորհրդարանների նախագահներ Սահիբա Գաֆարովայի և Ալեն Սիմոնյանի երկկողմ հանդիպումը:

Հայաստան-Իրան հարաբերություններ

2024 թվականի հունվարի 17-ին ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը Դավոսում ընթացող Միջազգային տնտեսական ֆորումի շրջանակներում հանդիպել է ԻԻՀ ԱԳ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանի հետ:

2024 թվականի մայիսի 22-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն աշխատանքային այցով մեկնել է Իրանի Իսլամական Հանրապետություն և մասնակցել ողբերգական ավիավթարի հետևանքով զոհված ԻԻՀ նախագահ Էբրահիմ Ռայիսիի և ԱԳ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանի հրաժեշտի արարողությանը: Այցի շրջանակում ՀՀ վարչապետը հանդիպել է Իսլամական հեղափոխության գերագույն առաջնորդ Սեյեդ Ալի Խամենեիի և Իրանի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Մոհամմադ Մոխբերի հետ: Հուլիսի 7-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել Իրանի Իսլամական Հանրապետության նորընտիր նախագահ Մասուդ Փեզեշքիանի հետ: Հուլիսի 30-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն աշխատանքային այցով մեկնել է Իրանի Իսլամական Հանրապետություն և մասնակցել է Իրանի նորընտիր նախագահ Մասուդ Փեզեշքիանի երդմնակալության արարողությանը: Այցի շրջանակում ՀՀ վարչապետը հանդիպել է Իսլամական հեղափոխության գերագույն առաջնորդի և ԻԻՀ նախագահի հետ: Սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 1-ը Երևանում կայացել է Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստը և Եվրասիական տնտեսական երրորդ համաժողովը: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրավերով միջոցառմանը մասնակցել է ԻԻՀ առաջին փոխնախագահ Մոհամմադ Ռեզա Արեֆի գլխավորած պատվիրակությունը:

2024 թվականի փետրվարի 14-ից 15-ը ՀՀ փոխվարչապետ Միհեր Գրիգորյանի և ԻԻՀ նախագահի տեղակալ, Ծրագրավորման և բյուջետային կազմակերպության ղեկավար Դավուդ Մանզուրի համանախագահությամբ Թեհրանում կայացել է Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջկառավարական համատեղ հանձնաժողովի 18-րդ նիստը:

2024 թվականի սեպտեմբերի 26-ին Նյու Յորքում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպել է ԻԻՀ ԱԳ նախարար Սեյեդ Աբբաս Արաղչիի հետ: ՀՀ և ԻԻՀ արտաքին գործերի նախարարները նաև հանդիպել են հոկտեմբերի 18-ին Ստամբուլում անցկացվող «3+3» խորհրդակցական հարթակի շրջանակում:

2024 թվականի հունվարի 29-ին Հայաստան է այցելել Իրանի Իսլամական Հանրապետության Գերագույն առաջնորդի խորհրդական, արտաքին հարաբերությունների ռազմավարական խորհրդի ղեկավար Քամալ Խարազին: Վերջինս այցի շրջանակում հանդիպել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հետ:

Հաշվետու ժամանակահատվածում իրանական ընկերությունները մեկնարկել են «Հյուսիս-հարավ» ճանապարհային կապուղու Քաջարան-Ագարակ 32 կմ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքները:

Տարբեր հարթակներում շարունակվել են քննարկումները «Պարսից ծոց-Սև ծով» տրանսպորտային և տարանցիկ միջանցքի ձևավորման ուղղությամբ:

Շարունակվել են Հայաստան-Իրան բարձրավոլտ էլեկտրահաղորդման երրորդ գծի շինարարական աշխատանքները:

Հայաստան-Վրաստան հարաբերություններ

2024 թվականի հունվարի 26-ից 27-ը Թբիլիսիում Հայաստանի և Վրաստանի վարչապետերի գլխավորությամբ տեղի է ունեցել Հայաստանի և Վրաստանի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 13-րդ նիստը, որի շրջանակներում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև ռազմավարական գործընկերություն հաստատելու մասին» համատեղ հռչակագիրը: Մարտի 25-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն պաշտոնական այցով ժամանել է Հայաստան, սեպտեմբերի 16-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն աշխատանքային այցով մեկնել է Վրաստան:

2024 թվականի հուլիսի 3-ից 4-ը ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը այցելել է Վրաստան: Այցի ընթացքում ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպել է Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեի, Խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլիի և ԱԳ նախարար Իլյա Դարչիաշվիլիի հետ: Մայիսի 13-ից 14-ը Թբիլիսիում տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի և Վրաստանի ԱԳ նախարարությունների միջև: Սեպտեմբերի 9-ից 11-ը կայացած «Երևանյան երկխոսություն»

միջազգային համաժողովին մասնակցել է Վրաստանի ԱԳ նախարարի առաջին տեղակալ Լաշա Դարսալիան:

Տարին հագեցած է եղել նաև միջգերատեսչական համագործակցության տեսանկյունից: Մարտի 25-ից 26-ը Հայաստան է այցելել Վրաստանի կրթության և գիտության նախարար Գիորգի Ամիլախվարին: Այցի ընթացքում տեղի է ունեցել ԵՊՀ-ում Վրացագիտության կենտրոնի պաշտոնական բացումը: Ապրիլի 11-ից 12-ը Երևանում կայացել է Հայ-վրացական իրավական համագործակցության 5-րդ ֆորումը, որին մասնակցելու նպատակով ապրիլի 10-ից 13-ը Հայաստան է ժամանել Վրաստանի արդարադատության նախարար Ռատի Բրեգաձեի գլխավորած պատվիրակությունը: Հուլիսի 3-ից 4-ը Հայաստան են այցելել Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարի տեղակալ Իրակլի Նադարեիշվիլին և Կրթության, գիտության և երիտասարդության նախարարի տեղակալ Ալեքսանդր Ցուլաձեն: Հուլիսի 12-ից 13-ը Հայաստան է ժամանել Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Չիկովանիի գլխավորած պատվիրակությունը: Ստորագրվել է ՀՀ և Վրաստանի պաշտպանության նախարարությունների միջև 2024 թվականի համագործակցության պլանը: Հուլիսի 17-ից 18-ը Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը աշխատանքային այցով մեկնել է Վրաստան: Սեպտեմբերի 1-ից 3-ը պաշտոնական այցով Վրաստան է մեկնել ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի գլխավորած պատվիրակությունը:

2024 թվականի հունիսի 4-ին ՄԱԿ ԳԱ լիագումար նիստում Հայաստանն առաջին անգամ կողմ է քվեարկել Վրաստանից տեղահանվածների և փախստականների կարգավիճակի և վերադարձի վերաբերյալ բանաձևին:

2024 թվականին տարբեր մակարդակներում և ձևաչափերով շարունակվել են քննարկումները «Պարսից ծոց-Սև ծով» միջանցքի և Անդրսևծովյան էլեկտրական մալուխի անցկացման ծրագրին ՀՀ մասնակցության վերաբերյալ:

Ակտիվ են եղել միջխորհրդարանական շփումները: Հուլիսի 25-ից 26-ը Վրաստան է այցելել ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Ռ.Ռուբինյանի գլխավորած պատվիրակությունը: Սեպտեմբերի 1-ից 3-ը Հայաստան է ժամանել Վրաստանի խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Նիկոլոզ Սամխարաձեի գլխավորած պատվիրակությունը: Մարտի 28-ին և մայիսի 20-ին Հայաստանում կայացել են նաև ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի և Վրաստանի Խորհրդարանի կրթության, գիտության և երիտասարդության հարցերի հանձնաժողովի ու Վրաստանի խորհրդարանի մշակույթի հանձնաժողովի միջև:

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորում

2024 թվականի սեպտեմբերի 24-ին Նյու Յորքում ՄԱԿ Գլխավոր վեհաժողովի 79-րդ նստաշրջանի շրջանակում հանդիպում է տեղի ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ԹՀ նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի միջև:

2024 թվականի մարտի 1-ին Անթալիայի դիվանագիտական ֆորումի շրջանակում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել ԹՀ ԱԳ նախարար Հաքան Ֆիդանի հետ: Հայաստանի և Թուրքիայի արտաքին գործերի նախարարները հանդիպում են ունեցել նաև հոկտեմբերի 18-ին Ստամբուլում անցկացվող «3+3» խորհրդակցական հարթակի շրջանակում և քննարկել են Հայաստանի ու Թուրքիայի միջև հարաբերությունների լիարժեք կարգավորմանը միտված երկխոսության շարունակականությունը:

2024 թվականի հուլիսի 30-ին Հայաստան-Թուրքիա ցամաքային սահմանի Մարգարա-Ալիջան անցակետում տեղի է ունեցել Հայաստանի և Թուրքիայի հատուկ ներկայացուցիչների հինգերորդ հանդիպումը, որի ընթացքում կողմերը վերահաստատել են նախորդ հանդիպումների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունները, պայմանավորվել են տարածաշրջանային զարգացումներին համապատասխան գնահատել տեխնիկական կարիքները, որոնք հնարավորություն կընձեռեն գործարկել Ախուրիկ/Աքյաքա երկաթուղու սահմանային անցակետը, ինչպես նաև փոխադարձաբար դյուրացնել վիզայի ընթացակարգերը դիվանագիտական/պաշտոնական անձնագրեր ունեցողների համար:

Շփումներ են կայացել նաև գերատեսչությունների ղեկավարների մակարդակով: Մայիսի 17-ին Աշխաբադում անցկացվող Մշակույթի նախարարների միջազգային կոնֆերանսի շրջանակում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը հանդիպել է ԹՀ մշակույթի և զբոսաշրջության նախարար Մեհմեթ Նուրի Էրսոյին: Հայաստանի և Թուրքիայի հարաբերությունների ամբողջական կարգավորման շրջանակում, ի թիվս այլ հարցերի, նախարարներն ընդգծել են մշակութային համագործակցության նպաստը: Հոկտեմբերի 15-ին Ստամբուլում տեղի ունեցած Միջազգային ճանապարհային ֆեդերացիայի համաշխարհային կոնգրեսի շրջանակում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը հանդիպել է ԹՀ տրանսպորտի և ենթակառուցվածքների նախարար Աբդուլքադիր Ուրալօղլուի հետ:

Միջխորհրդարանական մակարդակում՝ հոկտեմբերի 14-ին Ժնևում Միջխորհրդարանական միության 149-րդ վեհաժողովի շրջանակում տեղի է ունեցել ՀՀ

Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի և ԹՀ Ազգային մեծ ժողովի նախագահ Նուման Քուրթուլմուշի հանդիպումը, որի ժամանակ կողմերը քննարկել են Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորմանը վերաբերող հարցերի լայն շրջանակ:

Հայաստան-Ռուսաստան հարաբերություններ

2024 թվականի ընթացքում շարունակվել է ՌԴ-ի հետ բարձրագույն և բարձր մակարդակներով երկխոսությունը: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի միջև կայացել է 2 հանդիպում և 2 հեռախոսազրույց: Մայիսի 8-ին Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի շրջանակներում Մոսկվայում կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ: Սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 1-ը անցկացված Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի շրջանակում Երևանում տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ՌԴ կառավարության նախագահ Միխայիլ Միշուստինի հանդիպումը:

Հոկտեմբերի 8-ին Մոսկվայում ԱՊՀ մասնակից պետությունների ղեկավարների խորհրդի հերթական նիստի ընթացքում կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ: Հոկտեմբերի 24-ին Կազանում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը մասնակցել են ԲՐԻԿՍ անդամ պետությունների ղեկավարների «АУТРИЧ» / «БРИКС ПЛЮС» ընդլայնված ձևաչափով հանդիպմանը:

2024 թվականի դեկտեմբերի 20-ին ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանի և ՌԴ փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկի համանախագահությամբ Մոսկվայում կայացել է ՀՀ-ՌԴ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հերթական՝ 23-րդ նիստը:

2024 թվականի հոկտեմբերի 7-ին՝ ԱՊՀ մասնակից պետությունների ղեկավարների նիստին ընդառաջ, Մոսկվայում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը մասնակցել է ԱՊՀ մասնակից պետությունների ԱԳ նախարարների խորհրդի նիստին:

2024 թվականի դեկտեմբերի 19-ից 20-ը Մոսկվայում անցկացվել է մշակույթի բնագավառում Հայ-ռուսական կրթական երկրորդ համաժողովը:

Հայաստան-ԱՄՆ հարաբերություններ

2024 թվականի ընթացքում շարունակվել է ԱՄՆ-ի հետ ռազմավարական երկխոսության ու գործընկերության ամրապնդումն ու ընդլայնումը՝ ժողովրդավարության, օրենքի գերակայության, մարդու իրավունքների պաշտպանության, կոռուպցիայի դեմ

պայքարի, արդարադատության ու դատաիրավական համակարգի բարեփոխումների, անվտանգության և այլ ուղղություններով:

2024 թվականի մայիսի 4-ից 13-ը կայացել է ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի այցը Կալիֆորնիա:

2024 թվականի մարտի 20-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը առցանց ուղերձ է ներկայացրել ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի նախաձեռնած՝ «Հանուն ժողովրդավարության» երրորդ գագաթնաժողովին: Տարվա ընթացքում նաև կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի 2 հանդիպում և 2 հեռախոսազրույց: Ապրիլի 5-ին Բրյուսելում կայացել է Հայաստան-ԵՄ-ԱՄՆ բարձր մակարդակի համատեղ հանդիպումը:

Նոյեմբերի 16-ին կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ԱՄՆ նորընտիր նախագահ Դոնալդ Թրամփի հեռախոսազրույցը: Դեկտեմբերի 8-ին Փարիզի Աստվածամոր տաճարի վերաբացման արարողության ընթացքում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը շփում է ունեցել ԱՄՆ ընտրված նախագահ Դոնալդ Թրամփի հետ:

Հաշվետու ժամանակահատվածում ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի նախաձեռնությամբ և մասնակցությամբ տեղի են ունեցել Հայաստանի և Ադրբեջանի ԱԳ նախարարների հանդիպումները՝ 2024թ. հուլիսի 10-ին Վաշինգտոնում, և սեպտեմբերի 26-ին Նյու Յորքում: Շարունակվել են ԱՄՆ Կովկասյան բանակցությունների հարցերով ավագ խորհրդական Լուի Բոնոյի տարածաշրջանային այցերը:

Հունիսի 11-ին Երևանում անցկացվել է ՀՀ-ԱՄՆ Ռազմավարական երկխոսության Ամփոփիչ նիստը, որին մասնակցելու նպատակով Հայաստան է այցելել ԱՄՆ Եվրոպայի և Եվրասիայի հարցերով պետքարտուղարի փոխտեղակալ Ջեյմս Օ'Բրայենը: Ամփոփիչ նիստի արդյունքներով՝ կողմերը ընդգծել են ռազմավարական երկխության մակարդակի՝ ռազմավարական գործընկերության բարձրացնելու մտադրության մասին:

Հունիսի 16-ից 18-ը Հայաստան է այցելել ԱՄՆ պետքարտուղարի՝ կառավարման և ռեսուրսների հարցերով տեղակալ Ռիչարդ Վերման: Հուլիսի 8-ից 11-ը կայացել է ԱՄՆ ՄԶԳ քարտուղար Սամանթա Փաուերի այցը Հայաստան: Հուլիսի 9-ից 10-ը կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի աշխատանքային այցը Վաշինգտոն: Հուլիսի 13-ից 17-ը կայացել է ԱՄՆ պետքարտուղարի՝ Քաղաքացիական անվտանգություն, ժողովրդավարություն և մարդու իրավունքների հարցերով տեղակալ Ուզրա Զեայի այցը Հայաստան: Սեպտեմբերի 9-ից 11-ը կայացել է ԱՄՆ պետքարտուղարության էներգետիկ ռեսուրսների բյուրոյի ավագ խորհրդական Հարրի Քամյանի այցը Հայաստան:

Սեպտեմբերի 18-ից 19-ը կայացել է ԱՄՆ պետքարտուղարի Հարավային Եվրոպայի և Եվրասիայի հարցերով փոխտեղակալ Ջոշուա Հաքի այցը Հայաստան:

2024 թվականի հոկտեմբերի 22-ից 23-ը կայացել է ԱՄՆ նախագահի հատուկ օգնական և Ազգային անվտանգության խորհրդի Եվրոպայի հարցերով տնօրեն Մայքլ Քարփենթերի այցը Հայաստան:

Զարգացել է փոխգործակցությունը առևտրի, բարձր տեխնոլոգիաների, գյուղատնտեսության և էներգետիկայի ոլորտներում: 2024 թվականի մարտի 8-ին Վաշինգտոնում կայացել է ՀՀ և ԱՄՆ միջև Առևտրի և ներդրումների հարցերով աշխատանքային խմբի (TIFA) հերթական նիստը: Մայիսի 6-ին կայացել է ԱՄՆ գյուղատնտեսության քարտուղարության պատվիրակության այցը Հայաստան: Մայիսի 9-ից 11-ը կայացել է ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը այցն ԱՄՆ: Հունիսի 7-ից 16-ը կայացել է ՀՀ ԲՏԱ նախարար Մխիթար Հայրապետյանի այցն ԱՄՆ: Օգոստոսի 3-ից 7-ը կայացել է ԱՄՆ միջուկային կարգավորող հանձնաժողովի հանձնակատար Դեյվիդ Օսթին Ռայթի պատվիրակության այցը Հայաստան:

Ակտիվ են եղել շփումները պաշտպանական ոլորտում: Հուլիսի 20-ից 26-ը կայացել է Կանզասի ազգային գվարդիայի գեներալ-ադյուտանտի տեղակալ և Կանզասի բանակի ազգային գվարդիայի հրամանատար բրիգադային գեներալ էնթոնի Մոհաթի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան: Հուլիսին Հայաստանում երկրորդ անգամ անցկացվել են «Eagle Partner 2024» զորավարժությունները: Հոկտեմբերի 2-ին կայացել է ԱՄՆ պաշտպանական հետախուզության գործակալության Եվրոպայի և Եվրասիայի տարածաշրջանային կենտրոնի տնօրեն Պատրիկ Փրայերի գլխավորած ԱՄՆ կառավարության պատվիրակության այցը Հայաստան: Դեկտեմբերի 3-ից 6-ը կայացել է ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի գլխավորած պատվիրակության այցը ԱՄՆ:

Իրավապահ մարմինների համագործակցության շրջանակներում՝ մայիսի 20-ից 21-ը կայացել է ԱՄՆ թմրանյութերի դեմ պայքարի և իրավապահ հարցերով միջազգային բյուրոյի քարտուղարի փոխտեղակալ Բրենդոն Յոդերի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան:

Տեղի են ունեցել նաև շփումներ օրենսդիր իշխանությունների ներկայացուցիչների միջև: 2024 թվականի ապրիլի 30-ից մայիսի 4-ը կայացել է ՀՀ ԱԺ Հայաստան-ԱՄՆ բարեկամական խմբի ղեկավար Հայկ Կոնջորյանի գլխավորած պատվիրակության աշխատանքային այցը Վաշինգտոն: 2024 թվականի հուլիսի 2-ից 5-ը կայացել է ԱՄՆ

սենատոր Ռոջեր Ուիքերի ղեկավարած կոնգրեսական երկկուսակցական պատվիրակության այցը Հայաստան:

Փոխայցելություններ և շփումներ են կայացել նաև տեղական ինքնակառավարման ոլորտում: Հունիսի 16-ից 20-ը կայացել է ԱՄՆ քաղաքապետերի և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների պատվիրակության առաջին պաշտոնական այցը Հայաստան և դրա շրջանակում՝ Քաղաքային և նահանգային դիվանագիտության հարցերով ԱՄՆ հատուկ ներկայացուցիչ Նինա Հաչիգյանի այցը: Նոյեմբերի 23-ից 29-ը կայացել է Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի այցը Լոս Անջելես:

2024 թվականի հունիսի 22-ից 29-ը կայացել է ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի գլխավորած պատվիրակության այցը ԱՄՆ:

2024 թվականի հոկտեմբերի 21-ից 27-ը կայացել է ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանի աշխատանքային այցը ԱՄՆ:

2024 թվականի նոյեմբերի 2-ից 7-ը կայացել է ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Վահագն Հովակիմյանի գլխավորած պատվիրակության աշխատանքային այցը ԱՄՆ:

Հայաստան-Ֆրանսիա հարաբերություններ

Հայ-ֆրանսիական հարաբերությունները 2024 թվականի ընթացքում շարունակել են ընդլայնվել և խորանալ տարբեր ոլորտներում: Հաշվետու տարվա ընթացքում Ֆրանսիան տարբեր առիթներով հստակ և սկզբունքային դիրքորոշումներով է արձագանքել Հայաստանի առջև ծառացած աշխարհաքաղաքական և հումանիտար խնդիրներին: Ֆրանսիայի իշխանությունները, օրենսդիր և գործադիր մարմինները ամենատարբեր հարթակներում և ամենաբարձր մակարդակով աջակցություն են հայտնել Հայաստանին:

2024 թվականի ընթացքում կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի երեք այց Ֆրանսիա (փետրվարի 21-ին, հոկտեմբերին 3-ին և դեկտեմբերի 7-ին): ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը նաև 3 անգամ հանդիպել են բազմակողմ հարթակներում (մարտի 21-ին՝ Բրյուսելում, հուլիսի 18-ին՝ Բլենհայմում և նոյեմբերի 7-ին՝ Բուդապեշտում):

2024 թվականի փետրվարի 9-ին Փարիզում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Ֆրանսիայի Եվրոպայի և արտաքին գործերի նախարար Ստեֆան Սեժուրնեի հետ: Սեպտեմբերի 15-ից 16-ը կայացել է Ֆրանսիայի ԱԳ նախարար Ստեֆան

Սեժուրնեի այցը Հայաստան, ապա սեպտեմբերի 25-ին կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և Ֆրանսիայի նորանշանակ ԱԳ նախարար Ժան-Նոել Բարոյի հանդիպումը ՄԱԿ ԳԱ շրջանակներում:

2024 թվականի ապրիլի 17-ին կայացել են քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի և Ֆրանսիայի արտաքին գործերի գերատեսչությունների միջև:

Տարվա ընթացքում տեղի են ունեցել բազմաթիվ խորհրդարանական, ռեգիոնալ և այլ պատվիրակությունների փոխայցելություններ:

Հայաստան-Հնդկաստան հարաբերություններ

Շարունակվել է ակտիվ քաղաքական երկխոսությունը Հնդկաստանի հետ բազմաոլորտ համագործակցության խորացման ուղղությամբ: 2024 թվականի հունիսի 6-ին կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոդի միջև հեռախոսազրույց: Սեպտեմբերի 24-ին ՄԱԿ-ում «Ապագայի գագաթնաժողովի» շրջանակում կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոդիի կարճատև հանդիպումը:

2024 թվականի փետրվարի 18-ին «Մյունխենի անվտանգության» համաժողովի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Ա.Միրզոյանը հանդիպել է Հնդկաստանի ԱԳ նախարար Սուբրամանյամ Ջայշանկարի հետ: Սեպտեմբերի 9-ից 11-ը Երևանում կայացած «Երևանյան երկխոսություն» համաժողովին մասնակցելու նպատակով Հայաստան է այցելել Հնդկաստանի արտաքին գործերի պետնախարար Կիրտի Վարդհան Սինգհը: Դեկտեմբերի 12-ին Նյու Դելիում կայացել են Հայաստանի, Հնդկաստանի և Իրանի արտաքին գործերի նախարարությունների միջև եռակողմ ձևաչափով երկրորդ քաղաքական խորհրդակցությունները:

Ակտիվ են եղել միջգերատեսչական շփումները: 2024 թվականի հունվարի 10-ից 11-ը ՀՀ էկոնոմիկայի նախարարի գլխավորած պատվիրակությունը Հնդկաստանի Գուջարաթ նահանգում մասնակցել է «Կենսունակ Գուջարաթ» 10-րդ համաշխարհային գագաթնաժողովին: Փետրվարի 22-ին կայացել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանի աշխատանքային այցը Հնդկաստան՝ «Ռաիսինա երկխոսություն» միջազգային համաժողովին մասնակցելու նպատակով: Մայիսի 6-ից 7-ը Հայաստան է ժամանել հնդկական խոշորագույն ընկերությունների խումբ հանդիսացող «Շապուրջի Պալոնջի» (Shapoorji Pallonji) հոլդինգի պատվիրակությունը: Կայացել են հանդիպումներ ՀՀ ԱԳՆ-ում և ՀՀ ՏԿԵՆ-ում, որոնց ընթացքում քննարկվել են «Հյուսիս-հարավ» միջազգային տրանսպորտային ծրագրի շրջանակներում ենթակառուցվածքների

կառուցման հեռանկարները: Օգոստոսի 17-ին ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանն առցանց մասնակցել է Հնդկաստանի կողմից անցկացվող «Գլոբալ Հարավի ձայնը» երրորդ գագաթնաժողովի ֆինանսների նախարարների նիստին: Նոյեմբերի 15-ին Հայաստանը դարձել է Հնդկաստանի և Ֆրանսիայի կողմից համատեղ նախաձեռնած «Միջազգային արևային դաշինքի» լիիրավ անդամ:

Հայաստան-Եվրոպական Միություն հարաբերություններ

Շարունակվել է տարբեր մակարդակներում ակտիվ երկխոսությունը Եվրոպական Միության հետ: Ապրիլի 5-ին Բրյուսելում կայացել է ՀՀ-ԵՄ-ԱՄՆ բարձրաստիճան հանդիպումը ՀՀ վարչապետի մասնակցությամբ: Հանդիպման արդյունքում ԵՄ կողմը կազմել և Հայաստանին է ներկայացրել 2024-2027 թվականների համար նախատեսված նոր ծրագիր «Դիմակայունություն և աճ» խորագրով՝ միտված Հայաստանի տնտեսական, էներգետիկ դիմակայունության ամրապնդմանը, ռազմավարական նշանակության ենթակառուցվածքների զարգացմանը, ներդրումային հոսքերի խթանմանը: Ծրագրի իրականացման նպատակով կազմվել է համապատասխան ճանապարհային քարտեզ: Հուլիսի 18-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնակցել է Միացյալ Թագավորությունում կայացած Եվրոպական քաղաքական համայնքի հերթական՝ 4-րդ և նոյեմբերի 7-ին՝ Հունգարիայում կայացած 6-րդ գագաթնաժողովներին: Վարչապետը նաև երկկողմ հանդիպումներ է ունեցել միջազգային գործընկերների հետ:

2024 թվականի փետրվարի 13-ին Բրյուսելում կայացել է Հայաստան-ԵՄ ՀԸԳՀ բարձրագույն մարմնի՝ Հայաստան-ԵՄ Գործընկերության խորհրդի 5-րդ նիստը՝ ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ, ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բոռելի համանախագահությամբ:

Փետրվարի 27-ից 28-ը կայացել է Եվրոպական հանձնաժողովի հարևանության և ընդլայնման բանակցությունների հարցերով գլխավոր տնօրինության Արևելյան հարևանության և հաստատությունների հզորացման հարցերով տնօրեն Ադրիեն Կիրալիի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան: Ապրիլի 8-ին կայացել է Եվրոպական խորհրդի քաղաքական և անվտանգային հարցերով կոմիտեի պատվիրակության այցը Հայաստան: Ապրիլի 22-ին կայացել է Հարավային Կովկասում և Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարի այցը Հայաստան: Ապրիլի 29-ից 30-ը կայացել է Եվրոպական հանձնաժողովի հարևանության քաղաքականության և ընդլայնման բանակցությունների հարցերով գլխավոր տնօրեն Խերտ Յան Կուպմանի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան: Հունիսի 4-ից 6-ը Հայաստան է ժամանել

ԵՄ արտաքին գործողությունների եվրոպական ծառայության Արևելյան Եվրոպայի, Ռուսաստանի, Կենտրոնական Ասիայի, տարածաշրջանային համագործակցության և ԵԱՀԿ հարցերով կառավարող տնօրեն Միխայիլ Զիբերտի գլխավորած պատվիրակությունը: Այցի ընթացքում հայկական կողմին է ներկայացվել Հայաստան-ԵՄ գործընկերության նոր օրակարգը:

Հունիսի 11-ից 12-ը տեղի է ունեցել Հայաստան-ԵՄ Գործընկերության կոմիտեի հերթական՝ 5-րդ նիստը: Երկօրյա նիստի ընթացքում ներկայացվել են համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կիրարկման գործընթացը, արձանագրված ձեռքբերումները և առկա դժվարությունները: Սեպտեմբերի 9-ին Հայաստան է ժամանել Եվրոպական հանձնաժողովի գործադիր փոխնախագահ, Եվրոպական ապրելակերպի խթանման հարցերով հանձնակատար Մարգարիտիս Սխինասը: Այցի ընթացքում պաշտոնապես մեկնարկել է մուտքի արտոնագրերի ազատականացման շուրջ երկխոսությունը: Դեկտեմբերի 4-ին Մալթայում ԵԱՀԿ նախարարական համաժողովի շրջանակներում տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ, ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով Բարձր ներկայացուցիչ Կայա Կալասի հանդիպումը:

Արդարադատության ոլորտում համագործակցության շրջանակներում հունվարի 18-ին Երևանում կայացել են Հայաստան-ԵՄ Մարդու իրավունքների երկխոսության, իսկ հունվարի 19-ին ՀՀ-ԵՄ արդարադատության, ազատության և անվտանգության հարցերով ենթակոմիտեի հերթական նիստերը: Ապրիլի 5-ին Բրյուսելում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանի Հանրապետության քրեական վարույթներով իրավական համագործակցության ոլորտում իրավասու մարմինների և Եվրոպական միության քրեական արդարադատության ոլորտում համագործակցության գործակալության (Եվրաջասթ) միջև համագործակցության մասին» համաձայնագիրը: Հայկական կողմից համաձայնագիրը ստորագրել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը: ՀՀ Ազգային ժողովը համաձայնագիրը վավերացրել է 2024թ. սեպտեմբերի 13-ին: Սեպտեմբերի 23-ին Հայաստան է ժամանել ԵՄ քրեական արդարադատության գործակալության (Եվրաջասթ) նախագահ Լադիսլավ Համրանը: Այցի ընթացքում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանի Հանրապետության քրեական վարույթներով իրավական համագործակցության ոլորտում իրավասու մարմինների և Եվրոպական միության քրեական արդարադատության ոլորտում համագործակցության գործակալության (Եվրաջասթ) միջև համագործակցության մասին» համաձայնագրի կիրարկումն ապահովող աշխատանքային պայմանավորվածությունը: Այն հաստատվել է ՀՀ նախագահի 2024 թվականի նոյեմբերի 29-ի հրամանագրով:

Շարունակվել են աշխատանքները միգրացիայի ոլորտում համագործակցության հետագա խորացման ուղղությամբ: Սեպտեմբերի 23-ին տեղի է ունեցել Հայաստան-ԵՄ Մարդկանց միջև շփումների հարցերով ենթակոմիտեի հերթական՝ 10-րդ նիստը առցանց ձևաչափով: Նոյեմբերի 5-ից 6-ը Հայաստան է ժամանել Եվրոպական հանձնաժողովի Միգրացիայի և ներքին գործերի գլխավոր տնօրինության պատվիրակությունը Հայաստան-ԵՄ Մուտքի արտոնագրերի ազատականացման շուրջ երկխոսության մեկնարկի համատեքստում կարիքների տեխնիկական գնահատում իրականացնելու նպատակով: Դեկտեմբերի 10-ից 11-ը Հայաստան է ժամանել Եվրոպական հանձնաժողովի Միգրացիայի և ներքին գործերի հարցերով գլխավոր տնօրենի տեղակալ Յոհանես Լուխների գլխավորած պատվիրակությունը՝ ներկայացնելու Հայաստան-ԵՄ մուտքի արտոնագրերի ազատականացման երկխոսության շրջանակներում մեկնարկող ընդհանուր գործընթացը:

Աշխատանքներ են տարվել տնտեսական և ներդրումային ոլորտներում համագործակցության խորացման ուղղությամբ: Փետրվարի 28-ին Երևանում կայացել է Հայաստան-ԵՄ ներդրումների համակարգման հարթակի երկրորդ հանդիպումը: Մայիսի 15-ից 16-ը կայացել է Եվրոպական հանձնաժողովի գործադիր փոխնախագահ, Առևտրի հարցերով հանձնակատար Վալդիս Դոմբրովսկիսի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան: Հոկտեմբերի 3-ին Երևանում տեղի է ունեցել Հայաստան-ԵՄ էներգետիկայի, տրանսպորտի, շրջակա միջավայրի, կլիմայի գործողության և քաղաքացիական պաշտպանության հարցերով ենթակոմիտեի հերթական՝ 8-րդ նիստը: Հոկտեմբերի 25-ից 26-ը Բրյուսելում տեղի է ունեցել Հայաստան-ԵՄ Առևտրի հարցերով Գործընկերության կոմիտեի հերթական՝ 6-րդ նիստը: Նոյեմբերի 8-ին Բրյուսելում տեղի է ունեցել Հայաստան-ԵՄ Տնտեսական համագործակցության և այլ առնչվող ոլորտներով ենթակոմիտեի հերթական՝ 4-րդ նիստը: Նոյեմբերի 27-ին Երևանում տեղի է ունեցել Ներդրումների համակարգման հարթակի երրորդ հանդիպումը: Դեկտեմբերի 5-ին Բրյուսելում տեղի է ունեցել «Ընդհանուր ավիացիոն գոտու մասին համաձայնագրի» ներքո գործող Համատեղ կոմիտեի երկրորդ նիստը:

Ձևավորվել է համագործակցություն ուղղված սահմանային անվտանգության և պաշտպանության ոլորտում կարողությունների զարգացմանը: Հուլիսի 22-ին ԵՄ խորհուրդը ընդունել է որոշումներ Հայաստանին «Խաղաղության եվրոպական գործիք»-ի ներքո աջակցություն տրամադրելու և մուտքի արտոնագրերի ազատականացման շուրջ երկխոսության վերաբերյալ: Հունիսի 3-ից 4-ը տեղի է ունեցել «Frontex» Եվրոպական սահմանային և առափնյա պահպանության գործակալության պատվիրակության այցը Հայաստան՝ քննարկելու գործակալության հետ ինստիտուցիոնալ համագործակցության խորացման հնարավորությունները: Նոյեմբերի 12-ից 14-ը Հայաստան է ժամանել Եվրոպական հանձնաժողովի «Արտաքին քաղաքական գործիք»-ի հարցերով ծառայության

և ԵՄ արտաքին գործողությունների եվրոպական ծառայության պատվիրակությունը՝ քննարկելու «Խաղաղության եվրոպական գործիք»-ի ներքո Հայաստանին տրամադրվելիք 2024 թվականի աջակցության փաթեթը: Նոյեմբերի 11-ից 15-ը տեղի է ունեցել ԵՄ անվտանգության ոլորտի կառավարման մեխանիզմի շրջանակներում գնահատման այց Հայաստան՝ ուսումնասիրելու Հայաստանի անվտանգային ոլորտի կառավարման կարիքները ԵՄ և անդամ-երկրների հետ ոլորտային համագործակցության հետագա ընդլայնման համատեքստում:

Հայաստան-Գերմանիա հարաբերություններ

2024 թվականին շարունակվել է Գերմանիայի հետ ակտիվ քաղաքական երկխոսությունը:

2024 թվականի հոկտեմբերի 7-ից 9-ը տեղի է ունեցել ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի աշխատանքային այցը Գերմանիա:

2024 թվականի փետրվարի 16-ից 18-ը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնակցել է Մյունխենի անվտանգության համաժողովին, որի շրջանակներում տեղի են ունեցել. Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցի և Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ եռակողմ, Գերմանիայի կանցլերի հետ երկկողմ հանդիպումներ: Ապրիլի 9-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցի հետ: Հուլիսի 18-ին ԵՔՀ 4-րդ գագաթաժողովի շրջանակներում տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցի հետ:

2024 թվականի փետրվարի 28-ին Բեռլինում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել ԳԴՀ ԱԳ նախարար Անալենա Բերբոքի հետ: Սեպտեմբերի 23-ին Երևանում տեղի են ունեցել Հայաստանի և Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունների միջև հերթական քաղաքական խորհրդակցությունները: Նոյեմբերի 19-ին տեղի է ունեցել Գերմանիայի ԱԳ նախարար Անալենա Բերբոքի աշխատանքային այցը Հայաստանի Հանրապետություն:

Ակտիվ են եղել միջխորհրդարանական շփումները: Փետրվարի 26-ին տեղի է ունեցել ԳԴՀ Բունդեսթագի իրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Էլիզաբեթ Վինկելմայեր-Բեքերի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան: Մարտի 11-ից 13-ը տեղի է ունեցել ՀՀ ԱԺ Հայաստան-Գերմանիա բարեկամական խմբի պատվիրակության այցը Համբուրգ: Հունիսի 25-ից 28-ը տեղի է ունեցել ԱԺ Հայաստան-Գերմանիա բարեկամական խմբի անդամների այցը Բեռլին: Սեպտեմբերի 18-ից 19-ը տեղի է ունեցել Գերմանիայի Բունդեսթագի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ

Միխայել Ռոթի այցը Հայաստան: Նոյեմբերի 20-ից 22-ը տեղի է ունեցել Բունդեսթագի ԵՄ հարցերի հանձնաժողովի նախագահ Անտոն Հոֆրայթերի այցը Հայաստանի Հանրապետություն:

Հայաստան-Միացյալ Թագավորություն հարաբերություններ

2024 թվականի հուլիսի 17-ից 20-ը աշխատանքային այցով Միացյալ Թագավորությունում էր գտնվում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորած պատվիրակությունը՝ մասնակցելու Եվրոպական քաղաքական համայնքի չորրորդ գագաթնաժողովին:

2024 թվականի հուլիսի 18-ին Լոնդոնում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Միացյալ Թագավորության արտաքին, համագործակցության և զարգացման հարցերով պետքարուղար Դեյվիդ Լամիի հետ:

Հայաստան-Չինաստան հարաբերություններ

Քայլեր են ձեռնարկվել Չինաստանի հետ համագործակցության հետագա ընդլայնման ուղղությամբ: Հոկտեմբերի 24-ին Կազանում «ԲՐԻԿՍ+» գագաթնաժողովի շրջանակներում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կարճատև զրույց է ունեցել ՉԺՀ նախագահ Սի Ծինփինի հետ: Մարտի 21-ին Բրյուսելում անցկացված Միջուկային գագաթաժողովի շրջանակներում կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը Չինաստանի փոխվարչապետ Ճան Գոցինի հետ:

2024 թվականի մայիսին 20-ին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան քաղաքի համայնքապետարանի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Հեյլունծիյան նահանգի Հարբին քաղաքի Ժողովրդական կառավարության միջև փոխըմբռնման և համագործակցության մասին» հուշագիր:

2024 թվականի հունիսի 19-ից 23-ը կայացել է Հայաստան-Չինաստան բարեկամական խմբի ղեկավար, ԱԺ նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանի գլխավորած պատվիրակության այցը Պեկին:

2024 թվականի հունիսի 24-ին Երևանում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի կառավարության միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելն ու շրջանցելը կանխելու մասին» համաձայնագիրը:

2024 թվականի հուլիսին չինական կողմը տրամադրել է 100,000 ԱՄՆ դոլար հրատապ մարդասիրական օգնություն Հայաստանի Լոռու և Տավուշի մարզերում տեղի ունեցած հեղեղումների հետևանքների հաղթահարման և ենթակառուցվածքների վերանորոգման նպատակով:

2024 թվականի սեպտեմբերի 3-ից «China Southern Airways» ավիաընկերությունը սկսել է Երևանից դեպի Չինաստանի Ուրումչի քաղաք (Սինձիան շրջան) ուղիղ չվերթներ իրականացնել՝ շաբաթական 2 անգամ:

2024 թվականի սեպտեմբերի 9-ից 14-ը տեղի է ունեցել ՀՀ վարչապետի տիկին, «Իմ Քայլը» բարեգործական հիմնադրամի տնօրեն Աննա Հակոբյանի այցը ՉԺՀ՝ «Շանհայի համագործակցության կազմակերպության» կանանց համաժողովին մասնակցության նպատակով:

2024 թվականի սեպտեմբերի 12-ից 14-ը կայացել է ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի գլխավորած պատվիրակության այցը ՉԺՀ՝ մասնակցելու Պեկինի Սյանշանի 11-րդ ֆորումին:

2024 թվականի սեպտեմբերի 30-ին կայացել է Չինաստանի ֆինանսական աջակցությամբ կառուցվող «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության նոր՝ 8-րդ տաղավարի շինարարության հիմնարկեքի արարողությանը:

Հայաստան-եվրոպական այլ երկրներ հարաբերություններ

2024 թվականի փետրվարի 6-ից 9-ը և դեկտեմբերի 2-ից 3-ը աշխատանքային այցերով Հաագայում էր գտնվում ՀՀ ԱԳ նախարարի գլխավորած պատվիրակությունը: Դեկտեմբերի 3-ին Հաագայում Հայաստանը միացել է «Ազատություն առցանց կոալիցիային»:

2024 թվականի հուլիսի 18-ին Միացյալ Թագավորությունում կայացած Եվրոպական քաղաքական համայնքի 4-րդ գագաթնաժողովի շրջանակում տեղի են ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի երկկողմ հանդիպումները Նիդերլանդների նորընտիր վարչապետ Հենդրիկուս Վիլհելմուս Մարիա Սխոուֆի, Ֆինլանդիայի նախագահ Ալեքսանդր Ստուբի, Լիտվայի նախագահ Գիտանաս Նաուսեդայի և Էստոնիայի Հանրապետության նախկին վարչապետ Կայա Կալասի հետ:

2024 թվականի դեկտեմբերի 5-ին Վալետայում ԵԱՀԿ նախարարական խորհրդի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել նորդիկ-բալթյան (NB8) երկրների ԱԳ նախարարների և ներկայացուցիչների հետ:

2024 թվականի մարտի 21-ին Բրյուսելում կայացած Միջուկային էներգիայի հարցերով գագաթնաժողովի շրջանակներում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը երկկողմ հանդիպումներ է ունեցել Ֆինլանդիայի վարչապետ Պետեր Օրփոյի, Շվեդիայի վարչապետ Ուլֆ Քրիստերսոնի և Բելգիայի վարչապետ Ալեքսանդր Դը Քրուի հետ:

2024 թվականի հունիսի 4-ին տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հեռախոսազրույցը Ֆինլանդիայի նախագահ Ալեքսանդր Ստուբի հետ:

2024 թվականի նոյեմբերի 28-ից 29-ը կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի աշխատանքային այցը Ֆինլանդիա:

2024 թվականի մայիսի 14-ից 15-ը «Կոպենհագենի ժողովրդավարության գագաթաժողովին» մասնակցելու նպատակով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը աշխատանքային այցով գտնվում էր Դանիայում:

2024 թվականի նոյեմբերի 6-ից 9-ը կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի աշխատանքային այցը Շվեդիա:

2024 թվականի նոյեմբերի 18-ին կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի այցը Սուրբ Աթոռ:

2024 թվականի մայիսի 13-ին ԵԱՀԿ գործող նախագահ, Մալթայի Հանրապետության ԱԳ, Եվրոպայի հարցերի և առևտրի նախարար Իեն Բորջի՝ Հայաստան կատարած աշխատանքային այցի շրջանակում ՀՀ ԱԳՆ-ում կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հետ հանդիպում:

2024 թվականի հոկտեմբերի 5-ին Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 19-րդ գագաթնաժողովի շրջանակում տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը Բելգիայի վարչապետ Ալեքսանդր Դը Քրուի հետ:

2024 թվականի փետրվարի 14-ից 15-ը տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի աշխատանքային այցը Լյուքսեմբուրգ: Փետրվարի 14-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և Լյուքսեմբուրգի ԱԳ նախարար Քսավյե Բետելի մասնակցությամբ Լյուքսեմբուրգում կայացել է ՀՀ դիվանագիտական գրասենյակի պաշտոնական բացման արարողությունը: 2024 թվականի հուլիսի 18-ին ԵՔՀ 4-րդ գագաթաժողովի շրջանակներում

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում է ունեցել Լյուքսեմբուրգի վարչապետ Լյուկ Ֆրիդենի հետ:

2024 թվականի սեպտեմբերի 9-ին տեղի է ունեցել Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության փոխվարչապետ, արտաքին գործերի և արտաքին առևտրի նախարար Քսավիե Բետելի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան:

ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը 2024 թվականի հունիսի 29-ին Դուբրովնիկի ֆորումի շրջանակներում հանդիպում է ունեցել Ուկրաինայի ԱԳ նախարար Դմիտրո Կուլեբայի հետ և հոկտեմբերի 1-ին՝ Վարշավայի անվտանգության ֆորումի շրջանակներում Ուկրաինայի ԱԳ նախարար Անդրիյ Սիբիհայի հետ:

2024 թվականի նոյեմբերի 20-ին ՀՀ վարչապետի տիկին Աննա Հակոբյանը Ուկրաինայի առաջին տիկին Օլենա Զելենսկայայի հրավերով Վատիկանում մասնակցել է Սուրբ պատարագի՝ նվիրված խաղաղությանը և պատերազմի զոհերին:

2024 թվականի հոկտեմբերի 1-ից 2-ը կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի այցը Լեհաստան, որտեղ ՀՀ-ն առաջին անգամ ԱԳ նախարարի մակարդակով մասնակցել է Վարշավայի անվտանգության ֆորումին:

2024 թվականի նոյեմբերի 25-ից 27-ը կայացել է Լեհաստանի Հանրապետության նախագահ Անջեյ Դուդայի պաշտոնական այցը Հայաստան:

2024 թվականի հունվարի 10-ին կայացել է Հունաստանի ԱԳ նախարար Յորդոս Գերապետրիտիսի աշխատանքային այցը Հայաստանի Հանրապետություն:

2024 թվականի փետրվարի 27-ին կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի աշխատանքային այցը Հունաստանի Հանրապետություն:

2024 թվականի մարտի 7-ին տեղի է ունեցել Կիպրոսի ԱԳ նախարար Կոնստանտինոս Կոմբոսի պաշտոնական այցը Հայաստանի Հանրապետություն:

2024 թվականին հուլիսի 29-ին կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի աշխատանքային այցը Կիպրոսի Հանրապետություն:

Հայաստան-Հունաստան-Կիպրոս հարթակում շարունակել են զարգանալ միջպետական հարաբերություններն ու հագեցած օրակարգ՝ սկսած ակտիվ քաղաքական երկխոսությունից մինչև գործընկերություն և համագործակցություն տարբեր ոլորտներում՝ պաշտպանության, տնտեսության, մշակութային, ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ

մակարդակներում: 2024թ. իրականացված երկկողմ բարձրագույն և բարձրաստիճան փոխայցելությունների շրջանակում ընդգծվել և կարևորվել է Հայաստան-Հունաստան-Կիպրոս եռակողմ համագործակցության արդյունավետություն:

2024 թվականի փետրվարի 5-ից 7-ը կայացել է ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի այցը Հունգարիա:

2024 թվականի մայիսի 6-ին կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի այցը Հունգարիա:

2024 թվականի սեպտեմբերի 10-ին Հունգարիայի ԱԳ նախարար Պետեր Սիյարտոն Հայաստան է այցելել՝ մասնակցելու «Երևանյան երկխոսություն» միջազգային համաժողովին:

2024 թվականի նոյեմբերի 7-ին Բուդապեշտում Եվրոպական քաղաքական համայնքի հինգերորդ գագաթնաժողովի շրջանակներում կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը Սլովակիայի վարչապետ Ռոբերտ Ֆիցոյի հետ:

2024 թվականի սեպտեմբերի 25-ին ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 79-րդ նստաշրջանի շրջանակում կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Ռումինիայի նախագահ Կլաուս Յոհաննիսի հանդիպումը:

2024 թվականի հունիսի 20-ից 21-ը կայացել է ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի աշխատանքային այցը Լիտվա:

2024 թվականի նոյեմբերի 11-ին Հունգարիայում կայացած Եվրոպական քաղաքական համայնքի հինգերորդ գագաթնաժողովի շրջանակներում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում է ունեցել Էստոնիայի վարչապետ Կրիստեն Միհալի հետ:

2024 թվականի հունիսի 26-ից 27-ը կայացել է ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի աշխատանքային այցն Էստոնիա:

2024 թվականի հունիսի 29-ին Դուբրովնիկի համաժողովի շրջանակներում կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպումը Խորվաթիայի արտաքին և եվրոպական հարցերի նախարար Գորդան Գրլիչ Ռադմանի հետ:

2024 թվականի հունվարի 18-ից 19-ը կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի պաշտոնական այցը Խորվաթիա:

Պաշտոնական և աշխատանքային այցերով Հայաստան են ժամանել Անդորրայի Իշխանապետության խորհրդարանի նախագահ Կառլես Էնսենյատ Ռեիգը, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության Պատգամավորների պալատի նախագահ Կլոդ Վիզլերը, Չեխիայի Հանրապետության խորհրդարանի պատգամավորների պալատի նախագահ Մարկետա Պեկարովա Ադամովան, Նիդերլանդների Թագավորության Խորհրդարանի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի, Դանիայի խորհրդարանի, Ավստրիայի Ազգային խորհրդի պատգամավորների պատվիրակությունները:

Հայաստան-Միջին Արևելք և Աֆրիկա հարաբերություններ

Աշխատանքներ են տարվել Միջին Արևելքի պետությունների հետ համագործակցության առավել սրտացման, փոխգործակցության նոր հնարավորությունների ստեղծման ուղղությամբ:

2024 թվականի փետրվարի 16-ից 18-ը կայացած Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում է ունեցել Իրաքի վարչապետ Մուհամմադ Շիա Ալ-Սուդանիի հետ:

2024 թվականի փետրվարին 26-ից 29-ը տեղի է ունեցել ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի պաշտոնական այցը Իրաք:

2024 թվականի մարտի 5-ից 6-ը տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի պաշտոնական այցը Եգիպտոս, որի ընթացքում վարչապետը հանդիպումներ է ունեցել նախագահ Աբդ Ալ-Ֆաթթահ Ալ-Սիսիի, վարչապետ Մուստաֆա Մադբուլիի, Ղպտի ուղղափառ եկեղեցու առաջնորդ Թավադրոս Երկրորդ պատրիարքի, Ալ-Ազհարի գերագույն Իմամ շեյխ Ահմեդ Մուհամմադ Ալ-Տալիբի և եգիպտացի գործարարների հետ:

2024 թվականի մարտի 28-ին Հայաստանը մոտ 30 տոննա մարդասիրական օգնություն է (պահածոներ, չոր սնունդ, դեղորայք և բժշկական պարագաներ) ուղարկել Գազայի բնակչությանը:

2024 թվականի ապրիլի 17-ին տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի այցը Սաուդյան Արաբիա:

2024 թվականի ապրիլի 28-ից 29-ը ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը պաշտոնական այց է կատարել Կատարի Պետություն:

2024 թվականի մայիսի 21-ին ՀՀ և ԱՄԷ կառավարությունների միջև Աբու Դաբիում կայացել է առևտրատնտեսական և տեխնիկական համագործակցության համատեղ հանձնաժողովի նիստ:

2024 թվականի հունիսի 21-ին Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես ճանաչել է Պաղեստինի Պետությունը:

2024 թվականի հուլիսի 16-ին Նյու Յորքում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Լիբանանի ԱԳ նախարար Աբդալլահ Բու Հաբիբի հետ:

2024 թվականի սեպտեմբերի 23-ին Նյու Յորքում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Ալժիրի ԱԳ նախարար Ահմեդ Ատտաֆի հետ:

2024 թվականի սեպտեմբերի 27-ին Նյու Յորքում ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Պաղեստինի վարչապետ, ԱԳ և սփյուռքի նախարար Մուհամմադ Մուստաֆայի հետ, որի ընթացքում ստորագրել է «Հայաստանի Հանրապետության և Պաղեստինի Պետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին» համատեղ կոմյունիկե:

2024 թվականի հոկտեմբերի 3-ին Փարիզում, Ֆրանկոֆոնիայի նախարարական համաժողովի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Մավրիտանիայի ԱԳ, աֆրիկյան համագործակցության և արտերկրում մավրիտանացիների նախարար Մուհամմադ Սալեմ Մազրուկի հետ:

2024 թվականի հոկտեմբերի 8-ից 10-ը Աբու Դաբիում անցկացվել է հայ-էմիրաթական գործարար համաժողով՝ Աբու Դաբիի առևտրաարդյունաբերական պալատի հետ համագործակցությամբ:

2024 թվականի նոյեմբերի 29-ից ժամանակավորապես կասեցվել է Հայաստանի Հանրապետության հումանիտար առաքելության աշխատանքը Սիրիայում, և առաքելության անդամները վերադարձել են Հայաստան:

2024 թվականի դեկտեմբերի 7-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը մասնակցել է «Մանամայի երկխոսություն» միջազգային ֆորումին, որի շրջանակներում հանդիպում է ունեցել Բահրեյնի ԱԳ նախարար Աբդ Ալ-Լատիֆ բին Ռաշիդ Ալ-Զայանիի հետ:

2024 թվականի դեկտեմբերի 17-ին տեղի է ունեցել ԱՄԷ նախագահի դիվանագիտական հարցերով խորհրդական Անվար Գարգաշի այցը Հայաստան, որի ընթացքում նրան հանձնվել է Բարեկամության շքանշան:

Արաբական պետությունների լիգա

Եգիպտոս կատարած պաշտոնական այցի ընթացքում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում է ունեցել Արաբական պետությունների լիգայի գլխավոր քարտուղար Ահմեդ Աբուլ Ղեյտի հետ:

ՀՀ ուսանողները շարունակել են ուսանել Եգիպտոսի, Կատարի, Հորդանանի, Քուվեյթի բուհերում՝ նշյալ երկրների պետական կրթաթոշակներով:

Անդրսահարյան Աֆրիկա

ՀՀ ԱԳ նախարար Ա.Միրզոյանը Անթալիայի դիվանագիտական համաժողովի, Մյունխենի անվտանգության կոնֆերանսի, ՄԱԿ ԳԱ աշնանային նստաշրջանի բարձրաստիճան հատվածի և ՖՄԿ գագաթաժողովի շրջանակներում հանդիպել է Տոգոյի (2 անգամ), Մոզամբիկի, Ուգանդայի և Սիերա Լեոնի իր պաշտոնակիցների հետ:

Տրվել է աֆրիկյան երկրների հետ քաղաքական խորհրդակցություններ անցկացնելու մեկնարկը: Դրա շրջանակում Երևանում կայացել են ՀՀ և Տոգոյի ԱԳ նախարարությունների միջև առաջին քաղաքական խորհրդակցությունները:

ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցը Աֆրիկայի և Հարավային Ամերիկայի կրտսեր դիվանագետների համար կազմակերպել է վերապատրաստման դասընթաց:

Համագործակցություն այլ պետությունների հետ

2024 թվականի փետրվարի 28-ին Ճապոնիայի կառավարության և Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) միջև ստորագրվել է դրամաշնորհային համաձայնագիր «Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց և հյուրընկալող համայնքների հիմնական ենթակառուցվածքների և սոցիալական ինտեգրման աջակցության ծրագրի» շրջանակներում Ճապոնիայի կողմից 3 մլն ԱՄՆ դոլարի չափով մարդասիրական աջակցության տրամադրման վերաբերյալ:

2024 թվականի ապրիլի 14-ից 15-ը կայացել է ՂՀ նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաևի պաշտոնական այցը Հայաստանի Հանրապետություն:

2024 թվականի հոկտեմբերի 15-ից 16-ը կայացել է ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի պաշտոնական այցը Ղազախստանի Հանրապետություն:

2024 թվականի հոկտեմբերի 1-ին Երևանում կայացած Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստին մասնակցության նպատակով, որպես կառույցում դիտորդ պետության կառավարության ղեկավար, Ուզբեկստանի Հանրապետության վարչապետ Աբդուլա Արիպովն աշխատանքային այցով ժամանել է Հայաստանի Հանրապետություն:

2024 թվականի հոկտեմբերի 5-ին կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Կանադայի վարչապետ Ջասթին Թրյուդոյի հանդիպումը Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 19-րդ գագաթնաժողովի շրջանակներում:

2024 թվականի մարտի 28-ին ՀՀ կառավարությունը որոշում է կայացրել 300.000 ԱՄՆ դոլարի չափով օգնություն տրամադրել Ճապոնիայի Նոտո թերակղզում 2024թ. հունվարի 1-ին տեղի ունեցած երկրաշարժից տուժածների հումանիտար կարիքների բավարարման համար:

2024 թվականի մարտի 21-ից 26-ը ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը պաշտոնական այցով գտնվում էր Ուրուգվայի Արևելյան Հանրապետությունում և Արգենտինայի Հանրապետությունում: Մարտի 21-ին Մոնտեվիդեոյում պաշտոնապես բացվել է ՀՀ ռեզիդենտ դեսպանություն:

2024 թվականի հոկտեմբերի 17-ից 20-ը ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանի գլխավորած պատվիրակությամբ Հայաստանն առաջին անգամ որպես դիտորդ երկիր մասնակցել է Վիենտյանում (Լաոսի Ժողովրդական ժողովրդավարական Հանրապետություն) կայացած ԱՍԵԱՆ-ի միջխորհրդարանական վեհաժողովի «Խորհրդարանական համագործակցություն՝ ի նպաստ ինտեգրման և ներառական աճի» խորագրով 45-րդ գագաթաժողովին: Այցի ընթացքում ՀՀ ԱԺ նախագահի տեղակալը հանդիպումներ է ունեցել ԱՍԵԱՆ միջխորհրդարանական վեհաժողովի գլխավոր քարտուղարի, Մալայզիայի և Սինգապուրի խորհրդարանների նախագահների, Լաոսի և Վիետնամի Ազգային ժողովների փոխնախագահների, ինչպես նաև Հնդկաստանի և Չինաստանի խորհրդարանական պատվիրակությունների ղեկավարների հետ:

2024 թվականի նոյեմբերի 17-ից 23-ը կայացել է ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի պաշտոնական այցը Վիետնամ: Կրթության ոլորտում ստորագրվել են համագործակցության համաձայնագրեր Հայաստանի ամերիկյան համալսարանի ու

Վիետնամի ամերիկյան համալսարանի, ինչպես նաև Երևանի պետական համալսարանի ու Վիետնամի ամերիկյան համալսարանի միջև:

2024 թվականի դեկտեմբերի 17-ից 19-ը Հայաստան է այցելել Կորեայի միջազգային համագործակցության գործակալության (KOICA) Զարգացման պաշտոնական աջակցության հետազոտության և կրթության կենտրոնի ղեկավար Պարկ Սունջինը:

Լատինամերիկյան երկրների հետ արտոնագրային քաղաքականության պարզեցման աշխատանքների շրջանակներում Հայաստանը փոխադարձության հիման վրա առանց վիզայի մուտքի ռեժիմ ունի Արգենտինայի, Բրազիլիայի, Ուրուգվայի և Էկվադորի հետ: Չիլիի և Մեքսիկայի պարագայում գործում են դիվանագիտական անձնագրերով վիզային ռեժիմի վերացման մասին համաձայնագրերը: Ներկայումս համապատասխան ընթացակարգեր են անցնում մի շարք համաձայնագրեր:

Բազմակողմ համագործակցություն

Եվրասիական տնտեսական միություն

2024 թվականի հունվարի 1-ին Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է նախագահությունը Եվրասիական տնտեսական միության կանոնադրական մարմիններում:

2024 թվականի փետրվարի 2-ին Ալմաթիում կայացել է Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստ՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախագահությամբ: Նիստի ընթացքում քննարկվել են էլեկտրոնային առևտրի, մաքսային կարգավորումների, ռիսկերի կառավարման, տրանսպորտի, գյուղատնտեսության ոլորտների, երկաթուղային ենթակառուցվածքների և մուլտիմոդալ փոխադրումների կազմակերպման շուրջ համագործակցությանը վերաբերող հարցեր:

2024 թվականի մայիսի 8-ին Մոսկվայում կայացել է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստ՝ ՀՀ վարչապետի նախագահությամբ: Ընդունվել է Մոնղոլիայի հետ ժամանակավոր առևտրային համաձայնագրի կնքման շուրջ բանակցություններ մեկնարկելու մասին որոշում: Հավանություն է տրվել Վիետնամի հետ ապրանքների ծագման մասին տեղեկատվության էլեկտրոնային փոխանակման մասին արձանագրության նախագծին:

2024 թվականի հունիսի 3-ից 4-ը Բելառուսի Հանրապետության Նեսվիժ քաղաքում կայացել է Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստը: Նիստի օրակարգում էին ԵԱՏՄ շրջանակներում «Համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության հիմնական ուղղությունների և իրագործման փուլերի

միջոցառումների 2024-2026 թվականների ծրագիրը («ճանապարհային քարտեզը»)» հաստատելու հարցը, Եվրասիական զարգացման բանկի և Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի հետ անդամ պետությունների համագործակցության առանձնահատկությունները և այլն:

2024 թվականի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 1-ը Երևանում կայացել է Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստը և Երրորդ եվրասիական տնտեսական ֆորումը: ԵԱՏՄ անդամ պետությունների կառավարությունների ղեկավարներն, ի թիվս այլոց, հաստատել են ԵԱՏՄ ընդհանուր էլեկտրաէներգետիկ շուկայում տեղեկատվության փոխանակման կանոններն, ստորագրել են ապրանքների ընդհանուր բորսայական շուկայի ձևավորման հայեցակարգը: Ստորագրել է նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Ուզբեկստանի Հանրապետության կառավարության 2024–2026 թվականների համատեղ միջոցառումների ծրագիրը: Հայաստանյան կողմի հրավերով Եվրասիական տնտեսական խորհրդի նիստին և Եվրասիական տնտեսական ֆորումի պլենար նիստին մասնակցել է Իրանի առաջին փոխնախագահ Մոհամմադ Ռեզա Արեֆը:

2024 թվականի դեկտեմբերի 13-ին Մոսկվայում կայացած Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի ընթացքում ստորագրվել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից արդյունաբերության ճյուղերում համատեղ կոոպերացիոն նախագծեր իրականացվելիս ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին կարգում փոփոխություն կատարելու մասին որոշում: Փոփոխությունների նպատակն է՝ ֆինանսավորման մեխանիզմի գործարկման ընթացքում ի հայտ եկած բացերի շտկումը:

Շարունակվել են ազատ առևտրի համաձայնագրի կնքման շուրջ բանակցություններն Ինդոնեզիայի և Արաբական Միացյալ Էմիրությունների հետ:

Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)

Հաշվետու ժամանակահատվածում հայաստանյան կողմը շարունակել է դիրքավորումը ՀԱՊԿ-ում՝ կազմակերպությունում ՀՀ ներգրավվածության սառեցման հաշվառմամբ:

Անկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ)

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունը մասնակցել է ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի 1, կառավարությունների ղեկավարների

խորհրդի 2, արտաքին գործերի նախարարների 2, Տնտեսական խորհրդի 4 նիստերի, որոնց օրակարգերում ընդգրկված էր շուրջ 140 փաստաթուղթ:

Հայաստանի Հանրապետությունը միացել է ներքոշարադրյալ հայտարարություններին, որոնցում արտացոլվել են հայաստանյան կողմի առաջարկություններն ու նկատառումները՝

1941-1945թթ. Հայրենական Մեծ պատերազմում Հաղթանակի 80-ամյակի կապակցությամբ Համագործակցության երկրների ժողովուրդներին և համաշխարհային հանրությանն ուղղված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների ղեկավարների ուղերձ,

- քաղաքացիական նշանակության արհեստական բանականության ոլորտում համագործակցության զարգացման մասին ԱՊՀ պետությունների ղեկավարների հայտարարություն,
- ՄԱԿ Գլխավոր ասամբելայում ԱՊՀ-ին դիտորդի կարգավիճակ շնորհելու 30-ամյակի կապակցությամբ ԱՊՀ մասնակից պետությունների ԱԳ նախարարների հայտարարություն,
- լրագրողների իրավունքների խախտման անթույլատրելիության և նրանց մասնագիտական գործունեության համար անվտանգ պայմանների ապահովման մասին ԱՊՀ մասնակից պետությունների ԱԳ նախարարների համատեղ հայտարարություն,
- ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համագործակցության մասին ԱՊՀ մասնակից պետությունների ԱԳ նախարարների հայտարարություն,
- ԱՊՀ շրջանակներում Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ կնքվել է 3 իրավապայմանագրային փաստաթուղթ:

Միավորված ազգերի կազմակերպություն (ՄԱԿ)

Շարունակվել է ակտիվ համագործակցությունը ՄԱԿ շրջանակներում: ՀՀ ԱԳ նախարարությունը և ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչությունը ակտիվորեն ներգրավվել են Ապագայի հռչակագրի բանակցություններին, որի արդյունքներով հռչակագրում ամրագրվել են ՀՀ արտաքին քաղաքական առաջնահերթություններն արտացոլող մի շարք դրույթներ, այդ թվում՝ ՄԱԿ Կանոնադրությանը հավատարմության, միջազգային խաղաղության և անվտանգության, զարգացման և մարդու իրավունքների հենասյուների անվերապահ պահպանման, սպառազինությունների վերահսկման միջազգային և տարածաշրջանային մեխանիզմների ամրապնդման, մարդկության դեմ

հանցագործությունների և ցեղասպանությունների կանխարգելման հանձնառության վերաբերյալ:

2024 թվականի սեպտեմբերի 22-ից 27-ը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 79-րդ նստաշրջանի բարձրաստիճան հատվածին, այդ թվում՝ Ապագայի գագաթնաժողովին: Վարչապետը ունեցել է 9 երկկողմ հանդիպում ՄԱԿ անդամ պետությունների, ՄԱԿ Գլխավոր քարտուղարի և այլ միջազգային կազմակերպությունների ղեկավարության հետ: ՀՀ վարչապետը ելույթներով է հանդես եկել Ապագայի գագաթնաժողովին և ՄԱԿ ԳԱ բարձրաստիճան հատվածի ընդհանուր քննարկումներին: ՀՀ ԱԳ նախարարը ՄԱԿ ԳԱ բարձրաստիճան շաբաթվա շրջանակներում երկկողմ հանդիպումներ է ունեցել ՄԱԿ ավելի քան 20 անդամ պետությունների արտաքին գործերի նախարարների և ՄԱԿ քարտուղարության ղեկավարության հետ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ԱԳ նախարարության համակարգմամբ և ոլորտային գերատեսչությունների ներգրավմամբ մշակվել է Հայաստանում կայուն զարգացման նպատակների իրականացման վերաբերյալ երրորդ կամավոր ազգային զեկույցը:

2024 թվականի հուլիսին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է Կայուն զարգացման նպատակների իրականացման վերաբերյալ բարձր մակարդակի քաղաքական ֆորումին:

ՀՀ արտաքին գործերի նախարարության համակարգմամբ ու շրջակա միջավայրի նախարարության ներգրավմամբ նշանակալիորեն ակտիվացել է կլիմայական դիվանագիտությունը և ՀՀ ներգրավումը Ռիոյի երեք կոնվենցիաների ներքո ընթացող միջազգային գործընթացներին: 2024թ. հոկտեմբերի 21-ից նոյեմբերի 1-ը ՀՀ նախագահի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է Կոլումբիայի Կալի քաղաքում կազմակերպված ՄԱԿ «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի կողմերի 16-րդ հանդիպմանը (COP 16): ՀՀ ԱԳ նախարարության ու դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից ակտիվ արշավի շնորհիվ համաժողովին գաղտնի քվեարկությամբ 65 կողմ ձայներով Հայաստանն ընտրվել է որպես 2026թ. անցկացվելիք COP 17-ը հյուրընկալող երկիր:

ՀՀ ԱԳ նախարարության աշխատանքների շնորհիվ Հայաստանն ընտրվել է Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ շրջանակային կոնվենցիայի ներքո ստեղծված Կորստի և վնասի հիմնադրամի խորհրդի անդամ՝ միաձայն աջակցություն ստանալով Արևելաեվրոպական տարածաշրջանային խմբում: ՀՀ ԱԳ նախարարությունն ակտիվորեն

ներգրավվել է հիմնադրամի աշխատանքներին՝ փորձագիտական և քաղաքական աջակցություն ցուցաբերելով ՀՀ կողմից խորհրդի անդամ հանդիսացող շրջակա միջավայրի նախարարության ներկայացուցչին:

2024 թվականի ընթացքում Հայաստանն ընտրվել է ՄԱԿ Տնտեսական և սոցիալական խորհրդի անդամ 2025-2027 թթ. ժամանակահատվածի համար:

ՀՀ-ն պաշտոնապես դիմել է ՄԱԿ-ին՝ Հակաահաբեկչական ճանապարհորդության ծրագրին մասնակցելու խնդրանքով, որի արդյունքում նախատեսվում է ուղևորների նախնական տեղեկատվության ներդրման հարցում ստանալ համակողմանի (տեխնիկական, կարողությունների զարգացման, սարքավորումների և ծրագրային լուծումների համատեքստում աջակցություն) աջակցություն:

ՅՈՒՆԵՍԿՕ

Հաշվի առնելով 1954 թվականի Հաագայի կոնվենցիայի առաջնային կարևորությունը մշակութային ժառանգության պաշտպանության միջազգային իրավական շրջանակների ապահովման տեսանկյունից՝ Հայաստանն ակտիվորեն ներգրավվել է կոնվենցիայի 70-ամյա հոբելյանի միջոցառումներում: Այդ շրջանակներում հոկտեմբերի 28-ից 29-ը Երևանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ սերտ համագործակցությամբ կազմակերպվել է ոլորտի շուրջ 40 առաջատար միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների ու փորձագետների մասնակցությամբ միջազգային համաժողով՝ նվիրված ժառանգության պաշտպանության հարցում նոր տեխնոլոգիաների դերակատարությանը:

Հայաստանը, ելնելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի Զինված հակամարտությունների դեպքում մշակութային ժառանգության պաշտպանության կոմիտեին իր լիիրավ անդամի կարգավիճակից, նաև ակտիվ ներգրավում է ունեցել կոմիտեի 2024 թվականի ընթացիկ աշխատանքներում՝ բարձրաձայնելով հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

Հնագույն քաղաքակրթությունների ֆորումի նախարարական 8-րդ հանդիպում

Ի շարունակություն մշակութային ժառանգության պաշտպանության և խաղաղության մշակույթի ու միջմշակութային երկխոսության օրակարգերի առաջմղման քաղաքականության՝ Հայաստանը 2024 թվականին ստանձնել է Հնագույն քաղաքակրթությունների ֆորումի նախագահությունը և դեկտեմբերի 18-ին հյուրընկալել այս հարթակի 8-րդ նախարարական հանդիպումը: Համաժողովի արդյունքներով ընդունվել է Երևանի հռչակագիրը, որը ներառել է Հայաստանի արտաքին քաղաքական առաջնահերթություններից բխող մի շարք դրույթներ:

Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն (ԱԷՄԳ)

ՀՀ-ն հանդիսանալով ԱԷՄԳ քաղաքականություն մշակող մարմիններից մեկի՝ Կառավարիչների խորհրդի (2023-2025թթ.) անդամ, շարունակել է ակտիվ մասնակցություն ցուցաբերել և ներդրում ունենալ միջուկային էներգիայի ապահով և խաղաղ օգտագործմանն ուղղված միջազգային հանրության ջանքերին: ՀՀ-ն ընդգծել է խաղաղ նպատակներով օգտագործվող միջուկային օբյեկտների վրա զինված հարձակումները և դրա սպառնալիքները արգելող սկզբունքը, ինչպես նաև խաղաղ նպատակներով միջուկային էներգիայի օգտագործման կարևորությունը:

ԱԷՄԳ Գլխավոր համաժողովի 68-րդ նստաշրջանի շրջանակներում՝ 2024թ. սեպտեմբերի 20-ին ստորագրվել է ՀՀ-ի և ԱԷՄԳ-ի միջև 2024-2029թթ. համար տեխնիկական համագործակցության շրջանակը սահմանող փաստաթուղթը, որի համաձայն որպես համագործակցության առաջնահերթություններ են սահմանվել միջուկային և ճառագայթային անվտանգության բնագավառում ազգային կարգավորող ենթակառուցվածքի ամրապնդումը, ՀԱԷԿ-ի միջուկային անվտանգության, շահագործման հուսալիության և ճառագայթային պաշտպանության ամրապնդումը, առողջապահության բնագավառում ռադիոթերապիայի և ախտորոշման մեթոդների՝ նոր տեխնոլոգիաների և գիտելիքների փոխանցման միջոցով արդիականացումը, շրջակա միջավայրի մոնիտորինգի բնագավառում կարողությունների զարգացումը և ջրային ռեսուրսների կառավարման կարողությունների զարգացումը:

ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը մասնակցել է 2024թ. մայիսին Վիեննայում ԱԷՄԳ կենտրոնակայանում կայացած Միջուկային անվտանգության «Shaping the Future» խորագրով միջազգային 4-րդ համաժողովին (ICONS 2024): ԱԳ նախարարը հանդիպում է ունեցել ԱԷՄԳ Գլխավոր տնօրեն Ռաֆայել Մարիանո Գրոսսիի հետ:

Ապահովվել է ՀՀ պատվիրակության մասնակցությունը ԱԷՄԳ Գլխավոր համաժողովի (ԳՀ) 68-րդ նստաշրջանի աշխատանքներին: Համաժողովին ՀՀ պատվիրակությունը հանդես է եկել ազգային ելույթով: ՀՀ-ն ակտիվ ներգրավվածություն է ունեցել համաժողովի կողմից ընդունված բանաձևերի շուրջ բանակցություններում: Մասնավորապես՝ միջուկային և փոխկապակցված օբյեկտների նկատմամբ հարձակման կամ հարձակման սպառնալիքի վերաբերյալ ՀՀ սկզբունքային դիրքորոշումը: ՀՀ պատվիրակությանը ընդունել է ԱԷՄԳ գլխավոր տնօրեն Ռաֆայել Մարիանո Գրոսսին, աշխատանքային հանդիպումներ են կայացել ԱԷՄԳ, ինչպես նաև երկկողմ ձևաչափով այլ պետությունների պաշտոնյաների հետ:

Ապահովվել է ՀՀ շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների մասնակցությունը ԱԷՄԳ կողմից կազմակերպված տեխնիկական հանդիպումներին և համաժողովներին:

Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման պայմանագրի կազմակերպություն

Շարունակվել է ակտիվ ներգրավվածությունը Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման պայմանագրի կազմակերպության (CTBTO) շրջանակներում: Համապատասխան աշխատանքներ են տարվել Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման պայմանագրի կազմակերպության նախապատրաստական հանձնաժողովի (CTBTO) 62-րդ և 63-րդ հերթական նստաշրջաններին, ինչպես նաև աշխատանքային խմբերի նիստերին ՀՀ պատվիրակությունների մասնակցությունը ապահովելու ուղղությամբ: ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչները ԱԳ նախարարության աջակցությամբ մասնակցել են CTBTO ժամանակավոր տեխնիկական քարտուղարության կողմից կազմակերպված դասընթացներին և աշխատաժողովներին:

Քիմիական զենքի արգելման կազմակերպություն (ՔԶԱԿ)

Ապահովվել է ՀՀ մասնակցությունը նոյեմբերի 20-ից 22-ը Հաագայում կայացած ՔԶԱԿ անդամ երկրների Ազգային մարմինների ամենամյա հանդիպմանը:

Հանդիպման շրջանակներում նախաձեռնվել են երկկողմ հանդիպումներ ՔԶԱԿ տեխնիկական քարտուղարության, ինչպես նաև անդամ երկրների ներկայացուցիչների հետ՝ համագործակցային նոր հնարավորությունների բացահայտման նպատակով:

Ապահովվել է ՀՀ մասնակցությունը նոյեմբերի 25-ից 29-ը Հաագայում կայացած ՔԶԱԿ անդամ երկրների համաժողովի 29-րդ նստաշրջանի աշխատանքներին: ՀՀ պատվիրակությունը հանդես է եկել ազգային ելույթով, քվեարկել ՔԶԱԿ Գործադիր խորհրդում հերթական ընտրություններին, ինչպես նաև ունեցել երկկողմ հանդիպումներ:

Ապահովվել է ՀՀ ներկայացուցիչների (գիտնականների և ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների մասնագետների) մասնակցությունը ՔԶԱԿ տեխնիկական քարտուղարության կողմից կազմակերպվող դասընթացներին և սեմինարներին:

Սահմանված ժամկետներում ամփոփվել և ներկայացվել են Քիմիական զենքի արգելման կոնվենցիայի VI-րդ VII-րդ և X-րդ հոդվածների ներքո ՀՀ տարեկան հայտարարագրերը:

Կենսաբանական զենքի արգելման կոնվենցիա

Կենսաբանական զենքի արգելման կոնվենցիայի Իրականացման աջակցության ստորաբաժանմանն է ներկայացվել Վստահության ամրապնդման միջոցառումների ՀՀ տարեկան զեկույցը:

Ապահովվել է ՀՀ ներկայացուցիչների մասնակցությունը Կոնվենցիայի շրջանակներում կազմակերպված վերապատրաստման դասընթացներին և վեբինարներին:

Ապահովվել է մասնակցություն Կոնվենցիայի ամրապնդման հարցերով աշխատանքային խմբի չորրորդ և հինգերորդ նիստերին, որի ընթացքում քննարկվել են Գիտության և տեխնոլոգիաների հարցերով խորհրդատվական մեխանիզմի և Միջազգային համագործակցության և աջակցության լիարժեք իրականացման դյուրացման և աջակցման հարցերով մեխանիզմների հետ կապված հարցերը:

Կոնվենցիայի մասնակից պետությունների 2024թ. տարեկան հանդիպումը չի կայացել:

Շարունակվել են «Կենսանվտանգության և կենսապահովման հարցերով» աշխատանքային խմբի աշխատանքները, մշակվել և ներկայացվել է ԱԳ նախարարության դիրքորոշումը աշխատանքային խմբի օրակարգային մի շարք հարցերի վերաբերյալ:

Համագործակցություն Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության շրջանակներում

2024 թվականի փետրվարին Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունը հավանություն է տվել Ֆրանկոֆոնիայի 10-րդ միջազգային խաղերը 2027 թվականին Հայաստանում հյուրընկալելու հայտին:

2024 թվականի հոկտեմբերի 4-ից 5-ը Փարիզում կայացած Ֆրանկոֆոնիայի 19-րդ գագաթաժողովի շրջանակներում ընդունվել է «Ֆրանկոֆոն տարածքում ճգնաժամային իրավիճակների, ճգնաժամից դուրս գալու և խաղաղության ամրապնդման վերաբերյալ» բանաձև, որտեղ Հայաստանի նախաձեռնությամբ տեղ են գտել Հայաստանի անվտանգային մարտահրավերներն արտացոլող դրույթներ:

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ)

2024 թվականի փետրվարի 16-ին Մյունխենի համաժողովի և սեպտեմբերի 23-ին Նյու Յորքում ՄԱԿ ԳԱ 79-րդ նստաշրջանի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպումներ է ունեցել ԵԱՀԿ գործող նախագահ, Մալթայի

Հանրապետության արտաքին գործերի, Եվրոպայի հարցերի և առևտրի նախարար Իեն Բորջի հետ:

2024 թվականի մարտի 2-ին Անթալիայի դիվանագիտական ֆորումի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Հելգա Շմիդի հետ:

2024 թվականի մայիսի 13-ին կայացել է ԵԱՀԿ գործող նախագահ, Մալթայի Հանրապետության ԱԳ, Եվրոպայի և առևտրի նախարար Իեն Բորջի Հայաստան աշխատանքային այցը:

2024 թվականի դեկտեմբերի 4-ից 5-ը ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը աշխատանքային այցով գտնվել է Մալթայում՝ մասնակցելու ԵԱՀԿ տարեկան նախարարական համաժողովին: Դեկտեմբերի 5-ին նախարար Միրզոյանը հանդես է եկել ելույթով: Կայացել են ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հանդիպումները Ավստրիայի, Սլովենիայի, Սլովակիայի, Վրաստանի և Ղազախստանի ԱԳ նախարարների, ինչպես նաև Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ, ԵՄ ԱԳԱՔ բարձր ներկայացուցիչ Կայա Կալասի և Սուրբ Աթոռի պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ հարաբերությունների քարտուղար արքեպիսկոպոս Պոլ Ռիչարդ Գալագերի հետ: Նախարար Միրզոյանը նաև շփումներ է ունեցել մի շարք երկրների, այդ թվում՝ Գերմանիայի, Թուրքիայի, Լյուքսեմբուրգի, Ուկրաինայի, Նիդերլանդների, Անդորրայի, Կիպրոսի գործընկերների հետ: Շվեդիայի ընթացիկ նախագահության ներքո՝ առաջին անգամ տեղի է ունեցել նաև ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հանդիպումը նորդիկ-բալթյան (NB8) երկրների ԱԳ նախարարների և ներկայացուցիչների հետ, որի արդյունքներով հրապարակվել է համատեղ մամուլի հաղորդագրություն:

«Հայաստանում կիբեռհանցագործությունների դեմ պայքարի և կանխարգելման կարողությունների զարգացում» ԵԱՀԿ արտաբյուջետային ծրագրի շրջանակներում քայլեր են ձեռնարկվում Հայաստանում կիբեռհանցագործությունների տվյալների շտեմարանի ներդրման և գործարկման ուղղությամբ:

Հայաստան-Եվրոպայի խորհուրդ

Եվրոպայի խորհրդի (ԵԽ) հետ Հայաստանի համագործակցության շրջանակներում 2024 թվականի ապրիլի 8-ին տեղի է ունեցել ԵԽ գլխավոր քարտուղար Մարիա Պեյչինովիչ Բուրիչի այցը Հայաստան, որի ընթացքում հանդիպումներ են կայացել ՀՀ վարչապետի, ԱԺ նախագահի և ԱԳ նախարարի հետ:

2024 թվականի ապրիլի 10-ին Երևանում տեղի են ունեցել Հայաստան-Եվրոպայի խորհուրդ 2023-2026թթ. և Գործընկերություն հանուն լավ կառավարման (Partnership for Good Governance) ԵՄ-ԵՄ Հայաստանի Գործողությունների ծրագրերի միջգերատեսչական նիստերը, որոնց ընթացքում արձանագրվել է Գործողությունների ծրագրերի արդյունավետ կատարողականը:

2024 թվականի մայիսի 16-17-ին ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը մասնակցել է ԵԽ նախարարական 133-րդ համաժողովին: Հանդես է եկել ելույթով, հանդիպումներ ունեցել ԵԽԽՎ նախագահ Թեոդորոս Ռուսոպուլոսի, Մարդու իրավունքների հանձնակատար Մայքլ Օ'Ֆլահերթիի, Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի նախագահ Քուլս Մարկի հետ: Նախարարականի որոշումներում առաջին անգամ արձանագրվել է ԵԽ անդամ երկրների կառավարությունների լիակատար աջակցությունը խաղաղության գործընթացի հիմնարար սկզբունքներին, սահմանազատման համատեքստում վկայակոչվել է նաև Ալմա-Աթայի հռչակագիրը:

2024 թվականի սեպտեմբերի 24-ին ՄԱԿ ԳԱ շրջանակում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում է ունեցել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի պաշտոնը ստանձնած Ալեն Բերսեի հետ:

Եվրոպայի խորհրդի Ահաբեկչության դեմ պայքարի կոմիտեի շրջանակներում համաձայնեցվել է Ահաբեկչության նոր (համաեվրոպական) սահմանման վերաբերյալ լրացուցիչ արձանագրության տեքստը, ինչպես նաև վերջինս բացատրական զեկույցը, որը փաստացի հանդիսանում է տվյալ արձանագրության բոլոր դրույթների մեկնաբանման ուղեցույց: Հայաստանյան պատվիրակությունը ակտիվորեն մասնակցել է նշյալ աշխատանքներին: Այս իրադարձությունը առանցքային կարևորություն ունի ոչ միայն ԵԽ Ահաբեկչության դեմ պայքարի 2023-2027թթ. ռազմավարության կատարման համատեքստում, այլև միջազգային հարաբերություններում՝ հաշվի առնելով, այն հանգամանքը, որը մինչև օրս ահաբեկչության վերաբերյալ միջազգայնորեն ընդունված սահմանում չկա:

ՆԱՏՕ

2024 թվականի հունվարի 18-ից 19-ը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է Հայաստան ժամանած՝ Կովկասում և Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Խավիեր Կոլոմինային: 2024թ. փետրվարի 14-ին Բրյուսել կատարած այցի շրջանակում Խ.Կոլոմինային հանդիպել է նաև ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը:

2024 թվականի մարտի 19-ին ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգը տարածաշրջանային այցի շրջանակներում ժամանել է Երևան և հանդիպում է ունեցել վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ:

2024 թվականի հուլիսի 9-11-ը ՀՀ ԱԳ նախարար Ա.Միրզոյանը Վաշինգտոնում մասնակցել է ՆԱՏՕ-ի գագաթաժողովի գործընկերների ձևաչափով միջոցառմանը և կազմակերպության 75-ամյակին նվիրված հարակից միջոցառումներին:

Շանհայի համագործակցության կազմակերպություն

2024թ. հունիսի 6-ից 8-ը կայացել է ՇՀԿ գլխավոր քարտուղար Ճան Մինի գլխավորած պատվիրակության պաշտոնական այցը Հայաստան (ՇՀԿ ԳՔ-ի առաջին այցը Հայաստան):

Կազմակերպված միջոցառումներ

Ստեղծվել է դիվանագիտական ֆորում անցկացնելու նոր հարթակ՝ «Երևանյան երկխոսություն»: 2024թ. սեպտեմբերի 9-ից 11-ը Հայաստանում տեղի է ունեցել «Երևանյան երկխոսություն» միջազգային համաժողովը՝ միջազգային հանրության շրջանում մեծ հետաքրքրություն ներկայացնող մի շարք ակտուալ հիմնախնդիրներ ներառող օրակարգով: Իր նախադեպը չունեցող այս միջոցառումն առաջին անգամ էր կազմակերպվում Հայաստանում: Միջոցառումը տեղի է ունենալու տարեկան պարբերականությամբ:

2024 թվականի դեկտեմբերի 12-ից 13-ը Երևանում անցկացվել է «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» 5-րդ Գլոբալ ֆորումը՝ «Ցեղասպանության և այլ զանգվածային ոճրագործությունների վաղ ազդարարման և վաղ արձագանքման միջազգային մեխանիզմների արդյունավետության ամրապնդումը» թեմայով:

Օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների և շահերի պաշտպանություն

ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինները շարունակել են իրականացնել միջազգային և ներպետական օրենսդրությամբ սահմանված շրջանակներում օտարերկրյա պետություններում գտնվող ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, այդ թվում՝ արտակարգ իրավիճակներում հայտնված հայրենակիցներին աջակցության ցուցաբերումը:

Շարունակվել է տեսակապով հյուպատոսական ծառայությունների տրամադրումը այնպիսի երկրներում և հեռավոր վայրերում գտնվող ՀՀ քաղաքացիներին, որտեղ Հայաստանի Հանրապետությունը չունի դեսպանություն կամ հյուպատոսական հիմնարկ:

ԱԳՆ պաշտոնական կայքէջի «Հյուպատոսական ծառայություն» բաժնում ստեղծվել է նոր «տեսակապով ծառայություններ» բաժին՝ տեսակապով հյուպատոսական ծառայությունների մատուցման հանրային իրազեկվածությունը բարձրացնելու ուղղությամբ: